[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
27	Դեկտեմբեր	2018 թ.		U	3202508362
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
27	Դեկտեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի										
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	66103018 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
(անուն, ազգանուն)

Ստացող
պաշտոնը (ստորագրությունը) (անուն, ազգանուն)
պաշտոնը (ստորագրությունը) (անուն, ազգանուն)

27/12/2018 10:22:52

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հեղմահու դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին

«07» նոյեմբերի 2018թ. **ք. Չարենցավան**

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա. Ռ. Մելքումյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 66103018 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի օգոստոսի 30-ին՝ ժամը 12:25-ին, Չարենցավանի բժշկական կենտրոնից ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժին հաղորդում է ստացվել, որ իրենց մոտ է տեղափոխվել Արմինե Սարգսի Աճեմյանի /22.09.1978թ. ծնված, բնակվող գյուղ Ֆանտան/ դին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Արմինե Սարգսի Աճեմյանը Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի Գինևան Ոպանյան փողոցի 114 հասցեում գտնվող իր տան կտուրում պարանով կախվելու միջոցով գործել է ինքնասպանություն:

Դեպքի առթիվ 2018 թվականի սեպտեմբերի 8-ին ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Չարենցավանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 66103018 քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 22-ին քրեական գործի հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել և հիմնավորվել է, որ Արմինե Աճեմյանը, բնակվելով Կոտայքի մարզի Սոլակ գյուղում, 1995 թվականին ամուսնացել է Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի բնակիչ Շահեն Արարատի Աճեմյանի հետ և միասին բնակվել են ամուսնու հայրական տանը: Համատեղ ամուսնական կյանքում՝ 1999, 2000 և 2008 թվականներին նրանք ունեցել են երեք երեխաներ՝ մեկ որդի և երկու դուստր՝ Ջուլիետա Արման և Գայանե Աճեմյաններին: Շահեն Աճեմյանը, հիմնական աշխատանք չունենալով, զբաղվել է անասնապահությամբ: Արմինե Աճեմյանը, ապա 2018 թվականի մայիս ամսից նաև նրա ավագ դուստրը՝ Ջուլիետա Աճեմյանը, որպես մաքրուհի աշխատել են իրենց հարևանությամբ գտնվող Արամ Ավայանին պատկանող առանձնատանը: Նրանց ընտանիքը բնակվել է միջինից ցածր սոցիալական պայմաններում: Արմինե Աճեմյանը հոգեկան հիվանդությամբ չի տառապել: Վերջինս հուզական բնավորություն է ունեցել, շուտ բռնկվող, բացի այդ եղել է ընկերասեր, մարդամոտ բնավորությամբ և աշխատասեր: Թշնամիներ չի ունեցել, բոլորի հետ գտնվել է նորմալ հարաբերությունների մեջ: Արմինե Աճեմյանը աշխատատեղում խնդիրներ չի ունեցել, որևէ կրոնական կազմակերպությանը անդամագրված չի եղել: 2018 թվականի օգոստոս ամսվա վերջերից նրանց ընտանիքում անախորժություններ են առաջացել, կապված ավագ դստեր կողմից տանից հեռանալու, Երևան քաղաքում ինքնուրույն բնակվելու, սովորելու և այնտեղ աշխատելու հետ կապված: Մայրը, ինչպես նաև մյուս հարազատները դեմ են եղել Ջուլիետա Աճեմյանի որոշմանը, որը նրանց ընտանիքում վիճաբանությունների առիթ է ստեղծել: Ջուլիետա Աճեմյանը սկսել է ամեն ինչում հակադրվել մորը, նրան չլսել, նույնիսկ արտահայտվել է, որ իրեն հաճախ են դիտողություններ արել աշխատավարձը ինքնուրույն տնօրինելու, սակայն իրենց հետ

համատեղ ուտելու համար: Վերջինս նշել է, որ չի ցանկացել իր աշխատավարձը տուն բերել, որպեսզի չաշխատող եղբայրը և հայրը ծախսեն, հայտնելով, որ միևնույն է, գնալու է Երևան քաղաք, այլ աղջիկների հետ տուն վարձակալի, աշխատի, իր համար ավտոմեքենա գնի ու այնտեղ բնակվի առանձին: Վիճաբանության ընթացքում Ջուլիետա Աճեմյանը հայտնել է, որ մոր հետ միասին Արամ Ավայանի աշխատակցի՝ Արման Հովակիմյանի ավտոմեքենան են վարել, միաժամանակ մեղադրել է մորը նրանց բնակարանից ոսկյա շղթա և խաչ գողանալու մեջ, ինչը կրկին նրանց ընտանիքում նոր վիճաբանության պատճառ է հանդիսացել: Արմինե Աճեմյանը սրտնեղել է, դստեր խոսքերից, բարկացել է, միաժամանակ սպառնացել ինքն իրեն վերացնել: Հարազատներն այդ սպառնալիքները լուրջ չեն ընդունել և դրա հետ կապված որևէ գործողություն չեն կատարել: Արմինե Աճեմյանի եղբայրը՝ Կամո Հարությունյանը նույնիսկ բարկացել է քրոջ վրա, ամոթանք տվել, ասելով, որ <<ջանդամին վերացնես, մնացել ես սաղ ինչ անես, բա քո արածը ինչ էր, որ մեկել ասում ես դրա մեջ ինչ կա>>: Արմինե Աճեմյանը բարձրաձայն լաց լինելով հեռացել է: Որոշ ժամանակ անց եղբայրը գնացել է նրա հետևից և քրոջից պահանջել առանձնատան սեփականատիրոջը՝ Արամ Ավեյանին հայտնել, որ այլևս աշխատանքի չեն գնալու, պահանջել է կրտսեր դստեր թղթերը դպրոցից հանել և ընտանիքով տեղափոխվել Սոլակ գյուղ, իրենց մոտ բնակվելու նպատակով: Հաջորդ օրը առավոտյան Կամո Հարությունյանը հեռախոսով զրուցել է քրոջ հետ և տեսնելով, որ վերջինս իր ասածները չի արել, նրան հարցրել է, թե նախորդ օրը արտահայտվել է, որ իրեն վերացնելու է, մինչդեռ ոչ միայն իրեն չի վերացրել, այլ կրկին գնացել է աշխատանքի: Քույրը կրկնել է, որ իրեն կվերացնի, եղբայրն էլ հակադարձել է, թե <<քո արեվուն վերացնես, ջայնամին վերացնես, գեղինը մտնես դու>> և անջատել է հեռախոսը:

2018 թվականի օգոստոսի 30-ին՝ ժամը 12:25-ի սահմաններում Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի Ոպանյան փողոցի 114 տան կտուրում հայտնաբերվել է Արմինե Սարգսի Աճեմյանի կախված դին:

Վերոգրյալը հիմնավորվել է Ջուլիետա Շահենի Աճեմյանի, Շահեն Արարատի Աճեմյանի, Ռուստամ Սարգսի Հարությունյանի, Աննա Սարգսի Գալստյանի, Կամո Սարգսի Հարությունյանի, Արման Շահենի Աճեմյանի, Արման Շահենի Հովակիմյանի, Արտենիկ Սուրիկի Սրապիոնյանի և Հերմինե Մովսեսի Գևորգյանի ցուցմունքներով:

ՀՀ Կոտայքի մարզի <<Չարենցավան բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերությունից ստացված գրության համաձայն՝ Կոտայքի մարզի Ֆանտան գյուղի Գինևան Ոպանյան փողոցի 114 տան բնակիչ, 22..09.1978թ. ծնված Արինե Սարգսի Աճեմյանը <<Չարենցավան բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության հոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառման մեջ չի գտնվել:

ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Չարենցավանի բաժնից ստացված գրության համաձայն՝ կատարվել են օպերատիվ հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում պարզվել է, որ Արմինե Սարգսի Աճեմյանը ինքնասպանություն է գործել: Պարզվել է, որ Արմինե Աճեմյանը թշնամիներ չի ունեցել, նրա հասցեին որևէ մեկի կողմից սպառնալիքներ չեն եղել և նախկինում վերջինիս կողմից ինքնասպանություն գործելու փորձեր չեն եղել: Պարզվել է, որ Արմինե Աճեմյանը որևէ մեկի հետ արտք ու պահանջ չի ունեցել, որևէ կրոնական կազմակերպության անդամ չի հանդիսացել:

Նկատի ունենալով, որ Արմինե Աճեմյանի ինքնասպանության հնարավոր պատճառը, նրա հոգեկան վիճակը և քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հանգամանքների պարզումը հնարավոր է միայն դատահոգեբանական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-րդ, 244-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 66103018 քրեական գործով նշանակել հետմահու դատահոգեբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանին:

2. Փորձագետի լուծմանը առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ինչ հոգեվիճակում է գտնվել Արմինե Աճեմյանը ինքնասպանության նախորդող ժամանակահատվածում:

բ/ Արմինե Աճեմյանի նկատմամբ կատարված դստեր, եղբոր՝ Կամո Հարությունյանի և շրջապատի վերաբերմունքը կարող էին հասցնել այնպիսի հոգեվիճակի, որ վերջինիս կողմից կտուրում կախվելու միջոցով ինքնասպան լինելուն՝ պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

գ/ Արմինե Աճեմյանի սոցիալական ծանր վիճակը կարող էր վերջինիս հասցնել ինքնասպանություն կատարելու հոգեվիճակի, պատճառահետևանքային կապ կա, թե ոչ:

դ/ Եթե վերը նշված հանգամանքների պատճառով չէ Արմինե Աճեմյանը ինքնասպանություն կատարել, ապա գործի փաստական տվյալները հաշվի առնելով ինչը կարող էր նրա ինքնասպանության պատճառ հանդիսանալ:

3. Փորձագետին խնդրել՝ պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբանության բնագավառի փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար:

4. Փորձագետին տրամադրել քրեական գործը:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված՝ փորձագետի պարտականություններն ու իրավունքները և նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ ***Ա. Մելքումյան***